

չի վրայ ուր էր Ադամի մարմնոյն թաղուած տեղը: Ան դրախտը թողլէն և երկար ժամանակ անոր դիմացը բնակելէ վերջ, թողուց զայն և մեռաւ այդ տեղը, երուսաղէմ: Ան թաղուած է Գողգոթայի մէջ: Հաւանական է որ այս տեղը անոր անունը առած է, ան թարգմանուելով տեղի գազաթան. մինչ տեղւոյն ձեւը չկրեր գազաթի կամ գլուխի մը նմանութիւնը...:

Ինչո՞ւ գազաթ անունը առած է Գողգոթան — վասնզի առաջին մարգուն անուամբ գազաթը կամ գլուխը և անոր ոսկերոտիքը հոն թաղուած են, այդ պատճառաւ նոյն տեղը կը կոչուի «սեղի գազաթան(\*)» (P. E. F. 1880, էջ 110): Իսկ Գրիգոր վրդ. Տաթևացին կը գրէ թէ Սեմին հետ կը դառնուէր անոր որդին Արփափսաթ՝ որ Ադամին նշխարները Գողգոթայի՝ իսկ Եւայինը Բեթղեհէմի այրին մէջ թաղեցին մարգարէական հողով (Տար. 2. էջ 41): Մեր շարականն ալ ունի այս վկայութիւնը. «սոսկային սերոյթից՝ բառնայր ինկեսաւր զփայտ խային, մինչ ի սեղի Գողգորային. յորում եղեալ մարդն առաջին»:

Քրիստոնէական եկեղեցին առաջին դարէն սկսեալ, եկեղեցւոյ Հարք՝ առաջին մարգուն՝ Ադամին՝ որով բոլոր մարդկային ցեղը մեղանշած է, եւ Գողգոթայի նոր Ադամին՝ մեր Փրկչին միջեւ պերճախօս զուգակշիռ մը ըրած են: Քրիստոնէական պատկերագրութեան մէջ ալ այս զուգակշիռը տեղի տուած է Յաչափայտին ստորոտը գանկի մը խորհրդանշանական ներկայացման: Այս եղանակաւ աւանդութիւն մը գո-

(\*) «Եւ եկեալ ի սեղին անուանեալ Գողգորթա, որ է տեղի կառափելոյ» (Մատթ. Իէ. 31): «Եւ ամիև զնա ի Գողգորթա տեղի մի՝ որ քարմանի՝ տեղի կառափելոյ»: «Եւ ելանէր ի սեղին՝ որ անուանէր գազաթն եւ կոչիւր եբրայեցեբէն Գողգորթա»: